ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ք.Աբովյան, Հատիսի 4, հեռ. 060712727, E-mail kotaykmpv@mail.ru

03.06.2020թ.
18/980

Համայնքի ղեկավարին

Հարգելի գործընկեր

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Ջրային կոմիտեի <<Ջրառ>> ՓԲԸ-ի կողմից շահագործվող՝ ՀՀ Կոտայքի մարզում գտնվող Սևաբերդի ջրամբարում ս.թ. մայիսի 26-ի երեկոյան՝ ժամը 19:40-ից 19:55-ն ընկած ժամանակահատվածում ջրամբարում պահպանություն իրականացնող հերթապահների կողմից ջրի հայելու վրա նկատվել են շրջանաձև ալիքների տարածում, որոնց կենտրոնը դիտվել է ջրընդունիչ աշտարակից շուրջ 30 մ հեռավորության վրա՝ դեպի ձախ բնական ափը:

Շրջանաձև ալիքների հանդարտվելուց հետո նույն կետում դիտվել է ջրի խորքից օդի/գազի արտազատման երևույթ՝ ջրի տեղային հորիզոնի 5-10 սմ-ով բարձրացմամբ, որն իր հերթին կրկին առաջացրել է շրջանաձև տարածվող ալիքներ: Երևույթը տևել է 1-2 րոպե և այլևս չի կրկնվել:

Ահազանգի արդյունքում ջրամբարի աշխատակիցները եղել են տեղում և մինչև ժամը 23:15 րոպեն իրականացրել են ակնադիտական զննում, որի արդյունքում պատվարի շեպերի վրա ջրի եզրագծով որևէ շեղում չի նկատվել, սակայն ներքին բյեֆում՝ իռիգացիոն ջրթողի վերջնամասի հատվածում, նախկինում դիտված ֆիլտրացիոն ելքերը նախորդ օրերի նկատմամբ փոքր-ինչ ավելացել են:

Վերը նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել ջրամբարում ջրի հորիզոնի բարձրացում թույլ չտալ, որի նպատակով անհրաժեշտ է ջրամբարի իռիգացիոն ջրթողի ջրընդունիչ վթարային անցքի միջոցով կատարել ջրի թողքեր Սևաբերդի ձորով՝ Ձառ Ակունք, Արամուս, Նոր Գյուղ, Կոտայք, Մայակովսկի, Աբովյան, Բալահովիտ, Պտղնի, Առինջ համայնքների վարչական տարածքներով. Մայակովսկի համայնքի վարչական տարածքում հոսքի մի մասը բեռնաթափվում է Գետառ, իսկ մնացած մասը՝ Հրազդան գետ:

Ելքերը կարող են կազմել մինչև 1,5 մ³/վրկ:

Ս.թ. մայիսի 27-ին՝ ժամը 11:00-ի դրությամբ ջրամբարի հորիզոնը 1-ին ձողաքանոնին չի հասել. ջրամբարում ջրի առկա ծավալը գնահատվում է 470-480 հազ մ³:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ Դ-542
«03» 06 2020 թ.

Հաշվի առնելով վերը նշվածը՝ պայմանավորված ջրամբարի ներքին բյեֆում գետի հնարավոր վարարային ելքերով, անհրաժեշտ է իրականացնել բնակչությանը ազդարարում և կանխարգելիչ միջոցառումներ:

Կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն (kotaykmpv@mail.ru):

Հարգանքով՝

պետ, փ/ծ գնդապետ Ա. Ամիրջանյան

Կատարող՝ ԲՊԲ Գ.Պետրոսյան
Հեռ. 093-222-303